Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ <<ՀՀ Արարատի մարզի Մարմարաշենի Ա. Բարությանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի դասվարի և հայոց լեզու և գրականություն առարկայի 15 ժամ ուսուցչի թափուր տեղի համար:

Ուսուցչի թափուր տեղի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝գրավոր և բանավոր ըստ ՀՀԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1.Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը ,որին հավակնում է /Ձև 1/

2. Փաստաթուղթ/ դիպլոմ/ <<Հանրակրթության մասին >> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան կամ որակավորման վերաբերյալ,

3. Անձնագրի պատճենը

4.Ինքնակենսագրություն/Ձև 4/

5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի , հավաստագրերի պատճենները / դրանց առկայության դեպքում/.

6.Մեկ լուսանկար 3×4 չափի.

7.Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք:

8. Արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ.

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրից մինչև ս/թ սեպտեմբերի 23-ը ներառյալ ամեն օր ժամը $10^{00}$-ից $15^{00}$-ը , բացի շաբաթ և կիրակի օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա՝2020թ-ի սեպտեմբերի 25-ին, ժամը $12^{00}$-ին , Արարատի մարզի Մարմարաշենի Ա. Բարությանի անվան միջն. դպրոցում, Հասցեն Երևանյան խճուղի 71:

Տեղեկությունների համար զանգահարել 093-97-64-80 հեռախոսահամարով: